ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 10.12.2024Թ. N ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-24/06 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Իջևան « 31 » հուլիս 2025թ.

«ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը», ի դեմս գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Վեհ Իշխանասար ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Աֆոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 10.12.2024թ. թիվ **ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-24/06** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, և ՀՀ կառավարության 24.07.2025թ. թիվ 1012-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով՝ Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել սույն Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան աշխատանքները մինչև սույն թվականի դեկտեմբերի 20-ը:

1.2 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև 2025թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ: Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են 01.01.2025թ.-ից սկսված հարաբերությունների վրա: Ընդ որում սույն համաձայնագրի կնքելը Կատարողի կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կապալառուի կողմից կատարված աշխատանքի գինը կազմում է ***43996600 (Քառասուներեք միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր)*** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, որի վճարումն իրականացվելու է սույն համաձայնագրի թիվ 1 Հավելվածին՝ Վճարման ժամանակացույցին, համապատասխան: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, Աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված՝ 2 էջից, սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ	Վեհ Իշխանասար ՍՊԸ
ք. Իջևան, Սահմանադրության 1	Ք. Սիսիան, Կամոյի 22
ՀՀ ՖՆ ԳՈՐԾ վարչություն	09809845
07628257	1570074150920100
900371002792	Ամերիաբանկ ՓԲԸ
	Տնօրեն Կարեն Աֆոյան
_____ Արման Գևորգյան	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
« 31 » հուլիս 2025 թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-24/06 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակ (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45241131	Գետերի հոսանքների կարգավորման և ջրհեղեղների վերահսկման աշխատանքներ	-	43996600	43996600	43996600	43996600	43996600	43996600

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ
Ք. Իջևան, Սահմանադրության 1
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ վարչություն
07628257
900371002792

Արման Գևորգյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Վեհ Իշխանասար ՍՊԸ
Ք. Սիսիան, Կամոյի 22
09809845
1570074150920100
Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն Կարեն Աֆոյան

(ստորագրություն)

Կ.Տ.